ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24-28-Ը ԿԱԼԻՖՈՌՆԻԱ (ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ

1. **ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ**

   Արթուր Գրիգորյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

   ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարար

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

   ԱՄՆ՝ Կալիֆոռնիա (Անահեիմ), 2018թ. սեպտեմբերի 24-28-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   ԱՄՆ արևային էներգետիկայի ասոցիացիա

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ)**

   Մասնակցել «Solar Power International» միջազգային համաժողովին և ցուցահանդեսին

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

   Տարբեր ձևաչափերով քննարկվել են արևային էներգետիկայի բնագավառին վերաբերող հարցերի ողջ շրջանակը.

   ոլորտի տեխնոլոգիական զարգացումները, տեխնիկական նոր լուծումները,

   արևային կայանների ցանցի միացման, ռեժիմների կարգավորման հետ կապված հարցեր,

   արևային կուտակիչ կայաններին վերաբերող հարցեր:

7. **ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

   Համաժողովի ընթացքում փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

Համաժողովի շրջանակներում արտասահմանյան մի շարք ընկերությունների ներկայացուցիչների հետ կայացել են հանդիպումներ: Ներկայացվել է Հայաստանի վերականգնվող էներգետիկայի բնագավառում վարվող քաղաքականությունը, կարգավորող իրավական դաշտը, ներդրումային ծրագրերը: Մի քանի ընկերությունների ներկայացուցիչների հետ ձեռք են բերվել կոնկրետ պայմանավորվածություններ Հայաստանի արևային էներգետիկայի բնագավառի ներդրումային ծրագրերն առավել մանրամասն քննարկելու և նրանց՝ որպես ներդրող մասնակցելու հնարավորությունների վերաբերյալ:

9. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Համաժողովին և ցուցահանդեսին մասնակից արևային էներգետիկայի բնագավառի մի շարք ընկերությունների հրավիրել եմ մասնակցելու 2018թ. նոյեմբերի 14-16-ը Երևանում կայանալիք «Հայաստանի էներգետիկ շաբաթ» միջոցառմանը:

10. **ԱՄԻՍ, ԱՄՍԱԹԻՎ**

02.10.2018թ.